

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2

ԳՊՄԻ պատմաբանասիրական ֆակուլտետի խորհրդի 25. 09. 2014թ. նիստի՝

մասնակցությամբ խորհրդի 14 անդամների,

նախագահությամբ դեկան Ս.Հայրապետյանի

ՕՐԱԿԱՐԳ - 1. Պատմաբանասիրական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա ուսանողական պրակտիկաների վայրերի հաստատում:

2. Ըստ կուրսերի ֆակուլտետի 2014-2015 ուստարվա ուսումնական խորհրդատուների հաստատումը

3. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների 2013-2014 ուստարվա հաշվետվություններ:

4. Ընթացիկ հարցեր

ԼՄԵՑԻՆ - Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների վարիչների հաղորդումները 2014-2015 ուստարվա մանկավարժական /արտադրական պրակտիկաների վայրերի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Կուրազյան, Ն.Ավետիսյան, Ս.Հայրապետյան

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել մասնագիտական ամբիոնների վարիչներ Գ.Խաչիկյանի, Ե.Վարդանյանի եւ Ս.Խաչատրյանի ներկայացրած նախագծերը՝ 2014-2015 ուստարվա մանկավարժական /արտադրական պրակտիկաների /առկա, հեռակա բաժիններում, մագիստրատուրայում/ վայրերի վերաբերյալ /տե՛ս կից/:

ԼՄԵՑԻՆ- Դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը ըստ կուրսերի ֆակուլտետի ուսումնական խորհրդատուների նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել եւ ներկայացնել հրամանագրման պատմաբանասիրական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա ուսումնական խորհրդատուների կազմը ըստ կուրսերի.

1. Արմեն Հայրապետյան- պատմ. առկա եւ հեռակա 1-ին կուրսեր,

2. Ջեմա Երանոսյան- պատմ. առկա եւ հեռակա 2-րդ կուրսեր,

3. Արտակ Հովհաննիսյան - պատմ. առկա եւ հեռակա 3-րդ կուրսեր,
4. Մելինե Հարությունյան - պատմ. առկա 4-րդ եւ հեռակա 4-րդ, 5-րդ կ.,
5. Վարդիթեր Աբրահամյան - պատմ. մագիստր. 1-ին կուրս,
6. Հովհաննես Խորիկյան - պատմ. մագիստր. 2-րդ կուրս,
7. Աստղիկ Բախալբաշյան - իր. առկա եւ հեռակա 1-ին, 5-րդ կուրսեր,
8. Արմանուշ Մովսիսյան - իրավագիտ. առկա եւ հեռակա 2-րդ կուրսեր,
9. Արսեն Հակոբյան - իրավագիտ. առկա եւ հեռակա 3-րդ կուրսեր,
10. Պարույր Նալբանդյան - իր.. առկա եւ հեռակա 4-րդ կուրսեր,
11. Մանուշակ Հակոբյան - իրավագիտ. մագիստր. 1-ին կուրս,
12. Մարտին Թադեոսյան - իրավագիտ. մագիստր. 2-րդ կուրս,
13. Մերգեյ Կուրազյան - հ.լ. եւ գրակ. առկա եւ հեռակա 1-ին կուրսեր,
14. Արմենուհի Ավագյան - հ. լ. եւ գրակ. առկա եւ հեռ.2-րդ կուրսեր,
15. Օֆելյա Հովհաննիսյան - հ.լ. եւ գրակ. առկա եւ հեռ. 3-րդ կուրսեր,
16. Սաթենիկ Աղաբաբյան - հ.լ. եւ գրակ. առկա եւ հեռ. 4-րդ կուրսեր,
17. Հրանուշ Զաքյան - հայոց լ. եւ գրակ. մագիստր. 1-ին կուրս,
18. Անահիտ Հակոբյան - հայոց լ. եւ գրակ. մագիստր. 2-րդ կուրս,
19. Անահիտ Նորիկյան - լրագր. առկա 1-3-րդ, հեռակա 3- 4-րդ կուրսեր:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների 2013-2014 ուստար-
վա հաշվետվություններ քննարկման մասին /հաղ.՝ դեկան Ս.Հայրա
պետյանի/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ե.Վարդանյան, Գ.Խաչիկյան, Մ.Խաչատրյան

ՈՐՈՇԵՑԻՆ- Նկատի ունենալով, որ ֆակուլտետի մասնագիտական ամ-
բիոնների վարիչները խնդրում են եւս երկու շաբաթ ժամանակ տրա-
մադրել 2013-2014 ուստարվա հաշվետվություններ փաթեթը ավելի
ամբողջական ներկայացնելու նպատակով, հարցի քննարկումը տեղա-
փոխել ֆակուլտետի խորհրդի հոկտեմբեր ամսվա նիստ:

Ընթացիկ հարցերից՝

ԼՍԵՑԻՆ - Պատմության եւ իրավագիտության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի դասախոս Հովհաննես Խորիկյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորություն տալու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ե.Վարդանյան, Գ.Համբարյան, Ս.Հայրապետյան

ՈՐՈՇԵՑԻՆ- Նկատի ունենալով, որ անձնական փաստաթղթերի փաթեթը լիովին բավարում է դոցենտի կոչում շնորհելու մասին բուհական կանոնակարգի պահանջները՝

մրցությամբ հանձնաժողով ներկայացնել ֆակուլտետի խորհրդի երաշխավորությունը պատմության, իրավագիտության եւ նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Հովհաննես Խորիկյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը գիտխորհրդի քննարկմանը դնելու մասին:

ԼՍԵՑԻՆ - Պատմության, իրավագիտության եւ նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի առաջարկությունը մագիստրատուրայի ուսումնական պլաններում մասնակի փոփոխություններ կատարելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ե.Վարդանյան, Հ.Խորիկյան, Ն.Ավետիսյան, Ա.Հովհաննիսյան, Ս.Հայրապետյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Մասնակի փոփոխություններով ընդունել պատմության, իրավագիտության եւ նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի առաջարկությունը մագիստրատուրայի ուսումնական պլաններում փոփոխություններ կատարելու մասին եւ միջնորդել ուսումնագիտական վարչությանը պատմության եւ իրավագիտության մագիստրատուրայի գործող պլաններում կատարելու հետեւյալ փոփոխությունները.

ա/ պատմություն մասնագիտության գծով՝ 1-ին կուրսի 2-րդ կիսամյակում նախատեսված մասնագիտական պարտադիր կրթամասի «Կովկասի պատմություն» դասընթացը վերաձեւակերպել «Կովկասի պատմության հիմնախնդիրներ»,

բ/ պատմություն մասնագիտության գծով՝ 2-րդ կուրսի 1-ին կիսամյակում նախատեսված մասնագիտական պարտադիր կրթամասի «Կով-

կասի պատմության պատմագիտական հիմնահարցեր» դասընթացը վերաձեւակերպել «Հայ-ադրբեջանական հարաբերությունների պատմագիտական հիմնահարցեր»,

գ/ ուսանողի ընտրությամբ կրթամասում «ՀՀ եվրոինտեգրում» դասընթացը փոխարինել «ԽՍՀՄ պատմության ուսումնասիրման հիմնախնդիրներ» դասընթացով, իսկ «Միասնական Եվրոպայի քաղաքական եւ գաղափարական հիմքեր» դասընթացը վերաձեւակերպել «Միասնական Եվրոպայի պատմական, քաղաքական եւ գաղափարական հիմքեր»:

դ/ իրավագիտություն մասնագիտության գծով՝ 2-րդ կուրսի 1-ին կիսամյակում նախատեսված ուսանողի ընտրությամբ դասընթացների կրթամասում «Միջազգային կազմակերպությունների իրավական գործունեությունը» դասընթացը վերաձեւակերպել «Միջազգային կազմակերպությունների իրավունք»,

ե/ 2-րդ կուրսի 1-ին կիսամյակում նախատեսված ուսանողի ընտրությամբ դասընթացների կրթամասում «ՀՀ եվրոինտեգրման իրավական հիմքեր» դասընթացը փոխարինել «ՀՀ-ն միջազգային ինտեգրացիոն գործընթացներում» դասընթացով,

զ/ 2-րդ կուրսի 1-ին կիսամյակում նախատեսված ուսանողի ընտրությամբ դասընթացների կրթամասում «Գենդերային հավասարությունը մարդու իրավունքների համատեքստում» դասընթացը վերաձեւակերպել «Կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում»:

ԼՍԵՑԻՆ - Հայ գրականության, նրա դասավանդման մեթոդիկայի եւ լրագրության ամբիոնի առաջարկությունը «Հայոց լեզու եւ գրականություն» մասնագիտության բակալավրիատի նոր ուսումնական պլանում մասնակի փոփոխություն կատարելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Գ.Խաչիկյան, Ն.Ավետիսյան, Ս.Հայրապետյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Մասնակի ճշգրտումներով ընդունել հայ գրականության, նրա դասավանդման մեթոդիկայի եւ լրագրության ամբիոնի առաջարկությունը «Հայոց լեզու եւ գրականություն» մասնագիտության բակալավրի աստի նոր ուսումնական պլանում մասնակի փոփոխություն կատարելու մասին եւ միջնորդել ուսումնագիտական վարչությանը հայոց լեզվի եւ գրականության բակալավրի աստի գործող պլաններում 2015-2016 ուստարվանից կատարելու հետեւյալ փոփոխությունը.

ա/ նկատի ունենալով, որ «Մանկական գրականություն» դասընթացը նոր ուսումնական պլանով 2-րդ կուրսից տեղափոխվել է 1-ին կուրսի 1-ին կիսամյակ, նրա փոխարեն 2015-2016 ուստարվանից այդ դասընթացի 2-րդ կուրսի 1-ին կիսամյակի կրեդիտները /4/ եւ ժամաքանակը /32/ տրամադրել «Արտասահմանյան գրականություն» դասընթացին, որի նախկինում ունեցած ժամաձավալը /154ժամ/ գործող ուսպլանում շատ է կրճատված /112ժամ/:

ԼՍԵՑԻՆ - Դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը 2014-2015 ուստարում ուսանողական նպաստի ձեռով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցումից օգտվելու ուսանողների դիմումների եւ կրթաթոշակների /տվորական եւ անվանական/ նշանակման քննարկման նպատակով գումարված ֆակուլտետային մանդատային հանձնաժողովի նիստերի որոշումների, ամառային քննաշրջանի արդյունքներով ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, մինչեւ 12 կրեդիտ պարտքերով հաջորդ կուրս փոխադրելու եւ 12-ից ավելի կրեդիտ պարտքերով ինստիտուտից հեռացնելու մասին տվյալների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ե.Վարդանյան, Ա.Հովհաննիսյան, Մ.Խաչատրյան, Ա.Մնացականյան, Գ.Համբարյան, Է.Չոբանյան

ՈՐՈՇԵՑԻՆ- Ի գիտություն ընդունել ֆակուլտետի դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումն այն մասին, որ 2014-2015 ուստարում գործող կանոնակարգերի համաձայն`

ա/ մանդատային հանձնաժողովի որոշմամբ ուսանողական նպաստի

ձեռով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցումից օգտվելու թույլ - սովորյուն է տրվել 44 ուսանողի,

բ/ մանդատային հանձնաժողովի որոշմամբ ուսանողական կրթաթոն - շակներ /սովորական/ է նշանակվել 72 ուսանողի,

գ/ մանդատային հանձնաժողովի որոշմամբ անվանական կրթաթոշակ է հատկացվել լրագր. առկա 3-րդ կուրսի գերազանցիկ /տարեկան ՄՈԳ-ը՝ 99,68 / ուսանող Էմմա Չոբանյանին,

դ/ մանդատային հանձնաժողովի որոշմամբ 25 ուսանողների արվել է ուսման վարձի մասնակի զեղչ,

ե/ ամառային քննաշրջանի արդյունքներով առանց ակադեմիական պարտքերի կուրսից կուրս են փոխադրվել առկա համակարգի 144 ուսանողներ,

զ/ մինչև 12 կրեդիտ պարտքերով հաջորդ կուրս են փոխադրվել 16 ուսանողներ,

է/ 12-ից ավելի կրեդիտ պարտքերով ինստիտուտից հեռացման են ներկայացվել ֆակուլտետի առկա ուսուցման 4 ուսանողներ:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը 2014-2015 ուստարում ընդունված առաջին կուրսերում ավագներ նշանակելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Մնացականյան, Հ.Խորիկյան, Ա.Հովհաննիսյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել ֆակուլտետի դեկան Ս.Հայրապետյանի որոշումը առաջին կուրսերում ուսանողական ժողովների առաջարկությամբ հետևյալ ուսանողներին ավագներ նշանակելու մասին՝

1. Հայոց Լ. եւ գրակ. 1-ին կուրսում՝ Արեգնազ Վահրիճի Մանուկյանին,
2. Լրագրության 1-ին կուրսում՝ Լենա Գոռի Հովհաննիսյանին,
3. Պատմության 1-ին կուրսում՝ Աննա Արթուրի Կիրակոսյանին,
4. Իրավագիտ. 1-ին կուրսում՝ Ալբինա Կարենի Կարապետյանին:

ԼՄԵՑԻՆ - Որակի ապահովման կենտրոնի կանոնադրության համաձայն՝ պատմաբանասիարական ֆակուլտետի որակի ապահովման կենտրոնի ձևավորման մասին :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ն.Ավետիսյան, Գ.Համբարյան, Ս.Հայրապետյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Ձևավորել որակի ապահովման ֆակուլտետային կենտրոնի 2014-2015 ուստարվա հետևյալ կազմը.

ա. Մասնագիտական ամբիոնների պատասխանատուներ՝

1. Հովհաննիսյան Օֆելյա Հայկազի- Հայ գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պատասխանատու,
2. Աղաբաբյան Սաթենիկ Ֆելիքսի- Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պատասխանատու,
3. Պետրոսյան Լուսինե Սարգսի- Պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի պատասխանատու:

բ. Ուսանողներ՝

1. Տոնոյան Անահիտ - պատմության 2-րդ կուրսի ուսանողուհի,
2. Մանուկյան Ազապի - իրավագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի,
3. Խաչատրյան Լիլիթ - հայոց լ. և գրակ. 2-րդ կուրսի ուսանողուհի:

Խորհրդի նախագահ՝

ֆակուլտետի դեկան

նիստի քարտուղար

Ս. Հայրապետյան

Է. Չոբանյան